ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 մարտի 2025 թվականի N 19

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը, Վանաձոր համայնքի ավագանին որոշում է՝

1.Վանաձոր համայնքում սկսել 2025թ-ի մասնակցային բյուջետավորման գործընթաց:

2.Վանաձոր համայնքի 2025թ-ին բյուջեում հատկացնել 20 /քսան/ միլիոն ՀՀ դրամ գումար՝ 2025թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 86 630,16 ՀՀ դրամ:

4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:

5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:

6. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025թ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:

2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանուն:
3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՓԵԼԵՇՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԲԵՐՆԵՑՅԱՆ ԱՐՄԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԵՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԴԱՎԻԹ

ԽԼՈՊՈՒՉՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆՈՆԱ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԼԻԼԻԹ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ՍԵՅՐԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԼԻԶԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՕՀԱՆՅԱՆ ՎԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. մարտի 05
ք.Վանաձոր